ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ
(1980-ական թվականների վերջ – 1990-ական թվականների սկիզբ)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հայոց ցեղասպանությունը հանգեցրեց հայ էթնոսի գերակշռող մասի ֆիզիկական ոչնչացման, պատմական հայրենիքի մեծագույն մասի կորստյան, հայկական Սփյուռքի ձևավորման և որպես դրա հետևանքներից մեկը՝ պատմական հիշողության նոր շերտի առաջացման[1]: Ցեղասպանության թեմայի արծարծումը, սակայն, Խորհրդային Հայաստանում քաղաքական նկատառումներով երկար ժամանակ արգելված էր: Թերևս խրուշչովյան «ձնհալի» հետևանքով էր, որ 1965 թ. ապրիլին, ցեղասպանության 50-ամյակի նշման ժամանակ, Երևանում տեղի ունեցան զանգվածային ելույթներ, որոնք Խորհրդային Միությունում բավականին անսովոր երևույթ էին: Այդ ելույթները և դրանց հաջորդող դրականության ու արվեստի մեջ Մեծ եղեռնի թեմայի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը վկայում են, որ ցեղասպանության հիշողությունը, չնայած այն լռության մատնելու պաշտոնական քաղաքականությանը, շարունակում էր ապրել մարդկանց հոգիներում և գիտակցության մեջ: Սակայն այդ հիշողության մեջ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի: Մինչդեռ ազգային-ազատագրական պայքարի և դրա ֆիդայի-հերոսների թեման շարունակում էր մնալ չհայտարարված արգելք: Այդ ժամանակաշրջանի եղեռնի թեման շոշափող գործերի հիմնական բովանդակությունը կարելի է ձևակերպել Սիլվա Կապուտիկյանի «խաղաղ վրեժի» պատգամով՝ «Դու պիտի վրեժ առնես ապրելով»[2] կոչով: Եղեռնի զոհերի հուշահամալիրի կառուցումը և ամենամյա հարյուրհազարանոց սգո երթերը

---

[1] *Ինչպես նկատվել է, հատկապես նորագույն ժամանակներում ցեղասպանությունները խիստ հազվադեպ են հասնում իրենց առջև դրված նպատակների իրագործմանը, այն է՝ էթնիկ ընդհանրությունների վերացմանը, և ունենում են նաև այլ հետևանքներ: Մասնավորապես, գրանք կարող են բերել նաև հակառակ արդյունքի՝ վերակենդանացնել էթնիկ կապերը և ազգային ինքնագիտակցությունը, նպաստել դրա բյուրեղացմանը* (Anthony D. Smith. National Identity. Reno–Las Vegas–London, 1991, p. 31) *և, վերջապես, ինչպես հայոց պարագայում էր, նշանավորել էթնոգենեզի նոր փուլի սկիզբ (նման մոտեցումների մասին տե՛ս.* R. Adalian. A Conceptual Method for Examining the Consequences of the Armenian Genocide.– Problems of Genocide. Proceedings of the International Conference on "Problems of Genocide". Cambridge, Mass. and Toronto: The Zoryan Institute, 1997, p. 331. *Ա. Պետրոսյան. Հայոց ցեղասպանությունը որպես ազգածնություն.– «Հայացք Երևանից. հայագիտական», 1997, №4, էջ 47–52:* Л. Абрамян. Армения и армянская диаспора: расхождение и встреча. — «Диаспоры», 2000, № 1-2, с. 60)*:*

[2] *Ս. Կապուտիկյան. Մտորումներ ճանապարհի կեսին. Երևան, 1961, էջ 112:*

նպաստեցին ցեղասպանության հիշողության ամրապնդմանն ու դրա սերնդեսերունդ փոխանցման մեխանիզմի անխափան գործելուն:

1980-ական թվականների երկրորդ կեսից պատմական հիշողության գործոնը կրկին առաջին պլան մղվեց: Ընդհանրապես պատմական հիշողությունը «ազգ», «ազգային ինքնություն» եզրերը բնորոշող կարևորագույն տարրերից է[3]: Այն հենված է մարդկանց գիտելիքների և իրենց ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների վրա: Միևնույն ժամանակ, ինչպես ազգային ինքնություն, այնպես էլ պատմական հիշողություն հասկացությունները ստատիկ երևույթներ չեն, այլ ենթակա են ձևափոխումների, որոնք կարող են լինել ինչպես ներքին զարգացումների արդյունք, այնպես էլ արտաքին ազդեցությունների հետևանք: Դիտարկվող ժամանակաշրջանում (որը համապատասխանում է Հայոց երրորդ հանրապետության ձևավորմանը նախորդող տարիներին և պատմագրության մեջ հայտնի է «Ղարաբաղյան շարժում» բնութագրումով), երբ հայ հանրույթի կյանքում տեղ գտան համազգային նշանակության իրադարձություններ, գործեց վերոնշյալ գործոնների համակցումը, ինչը և հանգեցրեց նոր ինքնության կարևոր տարրերի ստեղծման:

Պատմական հիշողության խնդրի մեծ կարևորություն ձեռք բերելը պայմանավորված էր նախ և առաջ ԽՍՀՄ ղեկավարության հռչակած վերակառուցման, հրապարակայնության և դեմոկրատացման կուրսի հետևանքով զանգվածային լրատվության միջոցներում ու արխիվային-փաստագրական հենք ունեցող գեղարվեստական գրականության մեջ ծայր առած հատկապես խորհրդային շրջանի պատմության վերանայման և վերագնահատման գործընթացով: Արտաքին ազդակի դեր էր խաղում նաև ադրբեջանական պատմագրության մեջ ձևավորված և տարիների ընթացքում ավելի ու ավելի լայն ծավալներ ընդունող, այսպես կոչված, «աղվանական տեսության» քարոզումը, երբ Ադրբեջանի տարածքի հայկական մշակույթի հուշարձանները հայտարարվում էին ժամանակակից ադրբեջանցիների էթնոգենեզում որոշակի դեր խաղացած աղվանների մշակույթի անքակտելի տարրեր[4], երբ փորձ էր արվում Լեռնային Ղարաբաղի հայության պատմամշակութային ժառանգությունը կտրել նրա հայկական արմատներից, իսկ ղարաբաղցիներին էլ ներկայացնել որպես հայացված աղվանների սերունդներ[5]: Ստացվում էր, որ ժամանակակից ադր-

---

[3] *Տե՛ս, մասնավորապես,* Anthony D. Smith. *Նշվ. աշխ., էջ 21, 40, 43 և այլն, ուր հեղինակը պատմական հիշողությունը դիտարկում է որպես ազգային ինքնության էթնիկ հենքը կազմող «էթնիկ ընդհանրություն», «ազգ» հասկացությունների վեց-յոթ հիմնական բաղադրիչներից մեկը:*

[4] Д. А. Ахундов. Отличительные черты и символические особенности стел Кавказской Албании. — «Всесоюзная археологическая конференция «Достижения советской археологии в XI пятилетке». Баку, 1985, с. 77-78. *Նույնի՝* Архитектура древнего и раннесредневекового Азербайджана. Баку, 1986. *Հմմտ.* Б. Аракелян, А. Саакян. Хачкары — предмет антинаучных фальсификаций. — «Вестник общественных наук» (далее — ВОН), 1986, № 7, с. 38-48;

[5] *Մասնավորապես տե՛ս* А. А. Акопян. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987. А. А. Акопян, П. М. Мурадян, К. Н. Юзбашян. К изучению истории Кавказской Албании. —

բեջանցիներն ու Լեռնային Ղարաբաղի հայերն ունեին ընդհանուր նախնիներ ու, այդպիսով, նրանք պատմամշակութային տեսանկյունից կարծես թե դառնում էին «երկվորտ եղբայրներ» (cousins): Ամեն հայկականի ժխտումն ուներ միանշանակորեն գիտակցված բնույթ և նպատակ էր հետապնդում Ղարաբաղի հայերի էթնիկ ինքնագիտակցության մեջ ոչնչացնել դրա բազմաթիվ տարրերը՝ հայկական ծագումը, պատմական հիշողությունը, էթնիկ խորհրդանիշերը և այլն, թուլացնել հայկական արժեքային կողմնորոշումների կառուցվածքը և, այդպիսով, ազգային պատկանելության փոփոխության համար պատմահոգեբանական հող նախապատրաստել՝: Հենց դա էլ հայերի կողմից մեկնաբանվեց որպես ոտնձգություն ազգային ինքնության ու, մասնավորապես, պատմական հիշողության նկատմամբ և, ի թիվս այլ էական գործոնների, ոտքի հանեց պայքարի հանուն «պատմական ճշմարտության» վերականգնման[7]: Վերջին հանդամանքին մեծ նշանակություն էր տրվում՝ պայմանավորված հատկապես այն համոզմունքով, որ ստալինիզմի տարիներին տեղ գտած անարդարությունների քննադատությունը պետք է հանգեցնի այդ սխալների ուղղմանը: Ուստի, պատահական չէ, որ Ղարաբաղյան շարժման (1988–1990) հենց սկզբից որդեգրվեց 1921 թ. Կովբյուրոյի հայտնի որոշման համակողմանի դիտարկումն ու որպես Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի պատմաիրավական հենք՝ մերժումը: Այդ և նման այլ քննարկումներն ընթանում էին ոչ միայն պատմագիտական պարբերականների, այլև մամուլի էջերում, ռադիոյով ու հեռուստատեսությամբ, Օպերայի հրապարակի հարթակից տասնյակ և հարյուր հազարավոր մարդկանց ներկայությամբ: Այսպիսով, պատմական հիշողության գործոնն աստիճանաբար, քայլ առ քայլ դառնում էր Ղարաբաղյան շարժման գաղափարախոսության գիտակցվող կամ չգիտակցվող, սակայն կարևորագույն շարժիչ ուժը:

Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից մեկ շաբաթ անց տեղի ունեցան սումգայիթյան իրադարձությունները, երբ գազանաբար, XX դ. սկզբի հայերի ցեղասպանության թուրքական մեթոդներով սպանվեցին շուրջ երեք տասնյակ, գուցե և ավելի, Ադրբեջանի հայազգի քաղաքացիներ: Այս կոտորածները հայերի կողմից միանշանակ ընկալվեցին որպես ցեղասպանություն և վերարթնացրեցին պատմական հիշողության ամենահզոր՝ Մեծ

«Историко-филологический журнал», 1967, № 3, с. 166-189, Г. Х. С а р к и с я н, П. М. М у р а д я н. "Буниятовщине" не видно конца. — ВОН, 1988, № 5, с. 41—49; А. Т. М а р у т я н, Г. Г. С а р к и с я н, З. В. Х а р а т я н. К этнокультурной характеристике Арцаха. — ВОН, 1989, № 6, с. 3-18.

[6] Р. С. О г а н д ж а н я н. Межнациональные отношения и миграция. — ВОН, 1989, № 11, с. 50.

[7] H. M a r u t y a n. Historical Memory: Opportunity or Obstacle? – Regional Dynamics of the Black and Caspian Sea Basins. IREX Alumni Conference, Odesa, 2000. А. Т. М а р у т я н. К вопросу о роли исторической памяти в национальных движениях. — IV Конгресс этнографов и антропологов России. Нальчик, 2001, с. 96. Ն ա ւ յ ն ի՝ Историческая память в контексте этнокультурного единства и многообразия Южнокавказского региона. — В сб.: «Южный Кавказ: Этнокультурное разнообразие и единство региона. Материалы III Международной конференции. Южнокавказская сеть за гражданское согласие». Тбилиси, 2003, с. 9-19 (на рус. яз.), с. 69-78 (на англ. яз.).

եղեռնի շերտը: Ղարաբաղյան շարժումը, որն իր սկզբնավորման փուլում ուղղորդված էր Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման սատարմանը ու այդ կերպ տարածքային պատկանելության հարցում պատմական արդարության վերականգնմանը, ստացավ նոր խթան:

Պատմական ցանկացած իրադարձության անդրադառնալիս, պատմաբանը ձգտում է աշխատել որքան հնարավոր է շատ և տարաբնույթ, հնարավորինս օբյեկտիվ հենք ունեցող սկզբնաղբյուրների հետ: Մեր կարծիքով, Ղարաբաղյան շարժման ուսումնասիրության համար, ի թիվս այդ և հաջորդող տարիներին ստեղծված փաստաթղթերի, զանազան ելույթների, մամուլի անդրադարձների, հուշագրական և վերլուծական բնույթի աշխատությունների, էական նշանակություն ունեին ցուցապաստառները: Դրանք Ղարաբաղյան շարժման բոլոր փուլերին ուղեկցող և իրադրության ամեն մի փոփոխությանն անմիջապես արձագանքող յուրատեսակ պատկերագիր վկաներ էին, որոնցով շատ հարմար է հետևել հիշյալ փուլերին, քաղաքական կողմնորոշումների և ինքնության ձևափոխմանը: Շարժման ընթացքում ստեղծված ցուցապաստառների յուրահատկությունն այն է, որ դրանց ճնշող մեծամասնությունն արտահայտում էր ժողովրդի մտահոգությունները, տրամադրությունները, ցանկությունները, գնահատականները. դրանք ժանրային ամենատարբեր դրսևորումներ ունեին, ժողովրդական ազատ մտածելակերպի չմիջնորդավորված ցուցիչներ էին, ազգային ինքնության յուրատեսակ արտահայտություններ: Ղարաբաղյան շարժման ընթացքում և հաջորդող տարիներին մենք հավաքել ենք մոտ 1000 ցուցապաստառ: Դրանց շարքում առանձնանում են շուրջ 25 թեմատիկ խմբեր, որոնցից ամենաբազմաքանակը՝ շուրջ 350 ցուցապաստառ, այս կամ այն կերպ առնչվում է հայերի ցեղասպանությանը, մինչդեռ Լեռնային Ղաբաբաղի և Հայաստանի վերամիավորմանը նվիրված ցուցապաստառները կազմում են ընդամենը 60-ը (ևս 30-ն առնչվում է Ղարաբաղի հարցին՝ կապված երկրի ընդհանուր դեմոկրատացման քաղաքականությանը): Իր հերթին ցեղասպանությանն առնչվող ցուցապաստառների մեջ առանձնանում են յոթ մեծ ենթախմբեր[8]:

---

[8] Л. А. Абрамян, А. Т. Марутян. Транспаранты и плакаты, как зеркало Карабахского движения. — «Всесоюзная научная сессия по итогам полевых этнографических и антропологических исследований 1988-89 гг.». Тезисы докладов. Алма-Ата, 1990, с. 122-123. *Հ. Մարության. Հայ պոեզիան որպես ինքնության պատկերագրություն (ըստ Ղարաբաղյան շարժման ցեղասպանությանը նվիրված ցուցապաստառների).— «Հայկազյան հայագիտական հանդես», հ. Ի (20), 2000, էջ 269-306:* H. Marutyan. Iconography of Gharabagh Movement: An Index of the Transformation of Armenian Identity – Armenian Forum. A Journal of Contemporary Affairs, vol. 2, № 4, Winter 2000, p. 39-55. *Հ. Մարության. Մաղկեպսակը որպես ցուցապաստառ (ցեղասպանությունը և հայ ինքնության պատկերագրությունը).— «Հանդես Ամսօրյա» (այսուհետև՝ ՀԱ), 2001, №1–12, էջ 355–407: Նույնի՝ Սումգայիթյան ջարդեր. իրողություն, գնահատում և պատմական հիշողություն.— ՀԱ, 2002, №1–12, էջ 158–206: Նույնի՝ «Մենք պետք է կռվենք, և ոչ լաց լինենք...». անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացը Ղարաբաղյան շարժման համատեքստում.— ՀԱ, 2003, №1-12, էջ 411-468: Նույնի. Հայ ինքնության ձևափոխման հիմնական ուղղությունները Ղարաբաղյան շարժման տարիներին.— «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները». Հայագիտական միջազգային առաջին համաժողով, զեկուցումների դրույթներ. Երևան, 2003, էջ 55–56:* А. Марутян. Стратегия избежания геноцида согласно транспарантам и плакатам Карабахского движения. — «Археология,

Արդ, ի՞նչ կերպ է ցեղասպանության հիշողությունն ազդում նոր ինքնության ձևավորման վրա, որո՞նք էին այդ մեխանիզմի կարևորագույն փուլերը: Փորձենք այս հարցերի պատասխանները ներկայացնել ցուցապաստառային «լեզվով» (ենթախմբերի վերնագրերում օգտագործված են ցուցապաստառային ձևակերպումները):

Այսպես, առաջին խոշոր ենթախմբում՝ «Ճանաչել 1915 թ. Մեծ եղեռնը», *նկատվում է հետևյալ օրինաչափությունը. եթե սկզբնական փուլում ցուցապաստառները լոկ ֆիքսում էին XX դ. սկզբի հայտնի իրադարձությունները, գրանցում առկա էին անհասցե դիմումներ ցեղասպանությունը ճանաչելու խնդրանքով, երբեմն և պահանջով, ապա աստիճանաբար «հասցեատերերը» հստակվեցին, առաջարկվեցին նաև իրատեսական կամ խորհրդանշական ելքեր Մեծ եղեռնի ճանաչման հարցի նկատմամբ պետության և մարդկության անտարբերության, ցեղասպանությունը մոռացության մատնելու, չճանաչելու քաղաքականությունը հաղթահարելու համար, ինչն իր հերթին ցույց էր տալիս նաև մարդկանց քաղաքական-իրավական գիտելիքների որակական աճը:* «Սումգայիթը Մեծ եղեռնի շարունակությունն է» *երկրորդ ենթախմբի ցուցապաստառներն արձանագրում էին 1915 թ. ցեղասպանության և 1988 թ. սումգայիթյան ջարդերի նույնությունը, ու այդպիսով պահանջում այս վերջին իրադարձությունները դնահատել որպես ցեղասպանություն: Այս խմբի ցուցապաստառները նաև բացատրում էին ցեղասպանության շարունակականության օրինաչափությունը (*«Եթե ՍՍՀՄ կառավարության կողմից ճանաչվեր 1915 թ. ցեղասպանությունը՝ 1988 թ. Սումգայիթը չէր լինի»[9]*), իսկ տեղանունների, տարեթվերի ու քարտեզների միջոցով ստեղծված ցուցապաստառները ընդգծում էին պատմական հիշողության դրսևորման ձևերը և ինքնության մեջ տեղ գտած փոփոխությունները («Дейр-Зор Бухенвальд Сумгаит»,* «Պանթուրքիզմ - Դեր-էլ-Զոր, Ստալինիզմ - Ալթայ, ??? - Սումգայիթ»*): Երրորդ ենթախումբը վերաբերում է սգի և բարոյական պատասխանատվության հարցերին՝* «Դե եկ, Վարդապետ, ու մի խենթանա»*: Այստեղ վշտի և ողբի տարբեր պարունակող ցուցապաստառներին զուգահեռ, դնահատականը դրսևորվում էր նաև ամոթանք տալու բնույթ ունեցող ցուցապաստառների միջոցով: Դրանք ուղղված էին ինչպես սումգայիթյան ջարդերն ուղղակիորեն իրականացնողներին («Позор палачам Сумгаита»), խորհրդային պետությանը, որի քարոզչական մեքենան տասնամյակներ շարունակ խոսում էր իր երկրի ժողովուրդների անխախտ բարեկամության մասին (*«Սումգայիթ, Խոջալու - ամոթ ԽՍՀՄ-ին»*), քաղաքակրթության բարձրագույն վերելքը խորհրդանշող ժամանակաշրջանին՝ XX դ. («Погром сумгаитских армян — позор XX века!»), աշխարհի մարդկությանը (*«Սումգայիթը մարդկության խայտառակությունն է»*),*

этнология и фольклористика Кавказа. Материалы международной конференции». Ереван—Эчмиадзин, 2003, с. 306-309. *Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Սգո երթերը, անմեղ զոհերի հիշատակի օրերը որպես ժողովրդական հավատալիքների դրսևորման ձևեր.— «Հայ ժողովրդական մշակույթ», XII. Հանրապետական գիտաժողովի նյութեր. Երևան, 2004, էջ 98–102:*

[9] *Ցուցապաստառների տեքստերը բերվում են նույնությամբ:*

ինչպես և ակնկալվող ամենակարևոր բաներից մեկին՝ արդարությանը («Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»):

Չորրորդ խոշոր ենթախումբը վերաբերում է սումգայիթյան ջարդերի կազմակերպման հարցերին. «Բացահայտել Սումգայիթի կազմակերպիչներին»: Այստեղ առանձնանում են մի քանի համեմատաբար խոշոր բաժիններ: Առաջինը պարունակում է սումգայիթյան իրադարձությունների գնահատականի պահանջ և գնահատական. «Քաղաքական գնահատական Սումգայիթին»: Սրանց մեջ առաջնայինը ճշմարտացի և ամբողջական տեղեկատվություն պահանջող ցուցապաստառներն էին («Требуем правду о Сумгаите»): Ղարաբաղյան շարժման ողջ ընթացքում մարդիկ պահանջում էին Սումգայիթում կատարվածին գնահատական տալ՝ հատկապես քաղաքական, իսկ դրա բացակայության պայմաններում՝ իրենք էին տալիս այդ գնահատականը: Սա շատ էական հանգամանք է և շեշտում է Ղարաբաղյան շարժման նպատակներից մեկը՝ քաղաքական ճանապարհներով հարցի լուծմանը հասնելու անհրաժեշտությունը («Требуем от правительства СССР политическую оценку Сумгаита!», «Верховный Совет должен признать геноцид в Сумгаите»): Ետսումգայիթյան առաջին իսկ ցուցապաստառներում տեղ գտավ Սումգայիթ տեղանվան օգտագործումը որպես հայերի կոտորածի ու ջարդի, ցեղասպանության հոմանիշ («Прекратить "Сумгаит" в Карабахе»): Հայտնի է, որ քաղաքական գնահատական սումգայիթյան ջարդերին չէր տրվում: «Չտեսնելը» կամ, ավելի ճիշտ՝ «տեսնել չուզենալը» ևս Կենտրոնի կողմից որդեգրած քաղաքական որոշակի կուրսի դրսևորում էր և պատահական չէ, որ նման քաղաքականության գնահատականն անմիջապես իր արտացոլումը գտավ ցուցապաստառներում («Оценка сумгаита по логике страуса»):

Երկրորդ բաժինը վերաբերում է սումգայիթյան հանցագործություններն անմիջականորեն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտման և պատժի հարցերին. «Արժանի պատիժ Սումգայիթի ոճրագործներին»: Այստեղ պահանջվում էր ոչ թե վրեժ լուծել հանցագործներից, հաշվեհարդար տեսնել նրանց հետ, այլ նրանց նկատմամբ իրականացնել «արդարություն», «գատ», «պատիժ», «խստագույն պատիժ», այսինքն՝ առաջ է քաշվում սումգայիթյան իրագարձությունները «հրահրողներին» և «մանկասպաններին» օրինական ճանապարհով պատժելու գաղափարը՝ Սա շատ կարևոր պահ է, որովհետև կանխորոշում է սումգայիթյան հանցագործություններն անմիջականորեն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտման ու պատժի հիմնական, ուղենշային, հանգրվանային մեթոդները: 1988 թ. մայիսին էլ հայտնվեց, կարելի է ասել, մարգարեական, հաջորդող ամիսներին և տարիներին իրականություն գարձած կանխատեսումը՝ «Безнаказанность организованных погромов рождает новые погромы»:

Երրորդ բաժինը վերաբերում է մարգկանց պատկերացումներին սումգայիթյան հանցագործությունների անմիջական իրականացման և կազմակերպման հնարավոր մեղավորների մասին. «Մոսկվա+Բաքու=Սումգայիթ»: Այս հարցի շուրջ առկա պատկերացումների բավականին լայն դաշտը ժամանակի ընթացքում արմատական ձևափոխումներ կրեց, ինչը

հետևանք էր առաջին հերթին իրադարձությունների ընթացքի, ինչպես նաև դրանց արդյունքում մարդկանց քաղաքական գիտակցության մակարդակի բարձրացման: Այսպես, 1988 թ. ապրիլի 24-ի ցուցապաստառներից մեկը նշում էր «Враги перестройки — организаторы Сумгаита», մեկ այլ խումբ (հանձինս պանթուրքիզմի) կրկին գաղափարախոսական, սակայն որակապես այլ բնույթի թշնամիների էր մատնացույց անում. «Геноцид Сумгаита — испытанная тактика пантюркизма» կամ որ սումգայիթյան, ապա նաև Բաքվի ցեղասպանությունների ակունքներում պետք է փնտրել հենց այդ գաղափարախոսությունը և, ինչու չէ, նաև դրա ադրբեջանական տարբերակը «Геноцид в Сумгаите — преступление азербайджанского пантюркизма», ««Ապրիլի 24», «Սումգայիթ», «Բաքու» նույն ձեռագիրն է»:

Ինչպես վերը նշվեց, խորհրդային ղեկավարությունը սումգայիթյան ոճրագործություններին չէր շտապում քաղաքական գնահատական տալ, ուստի և արվում էր տրամաբանորեն հաջորդող, ընդհանրական բնույթի եզրակացությունը. ԽՍՀՄ-ը նկատի ունենալով նշվում էր. «Государство несёт ответственность за трагедию Сумгаита», «Հանցագործին հովանավորողը հանցագործ է» կամ՝ «Ցեղասպանություն չընդունողը՝ ցեղասպանության մասնակից է»: Սումգայիթյան իրադարձություններում ադրբեջանցիների մեղավորության մասին չէր ասվում ուղղակիորեն. հարաբերությունների անկյունաքարում դրվում էր ոչ թե էթնիկ տարբերակումը, այլ հանցագործություն կատարած լինելու և այդ պատճառով բարեկամության վերահաստատման անհնարինությունը. «Мы не желаем быть друзьями убийц», «Ինչ բարեկամություն 1915-1988 եղեռնից հետո» և այլն:

Փոխարենը բարեկամության թեման հետաքրքիր ձևափոխում ապրեց. հայ¬ադրբեջանական հարաբերությունների հարցերի շրջանակներից դուրս դալով, այն աստիճանաբար մուտք գործեց այլ, մասնավորապես, Հայաստան-Կենտրոն հարաբերությունների ոլորտը, դրանից արտածվելով՝ հայ-ռուսական բարեկամության դարերով սրբագործված բնագավառ՝ ներկայացնելով դրանց արդի դրսևորումների ժողովրդական գնահատականները («Մշտական բարեկամները» «մշտական թշնամիների» հովանավորությամբ իրականացնում են հայերի բնաջնջումը» կամ «Сумгаитский геноцид — интернационализм Кремля»):

Խորհրդային և ռուս զինվորի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն մատնանշող դնահատականի յուրօրինակ ձև է հետևյալ ցուցապաստառը. «Это же наши дети. Бухенвальдзе, Освенцем, Хатынь — Обмен опыта — Сумгаит, Масис, Звартноц, Шуша, Степанакерт...», որտեղ պատկերված է ֆաշիստ-էսէսականի և խորհրդային ներքին զորքերի զինծառայողի ձեռքսեղմումը, որից արյուն է կաթում: Դիտարկված պլակատն իր դնահատականներով կարծես շարունակությունն է խորհրդային և ռուս զինվորի մասին ունեցած կերպարի ձևափոխման գործընթացի: Սակայն այս պլակատով կարծես թե առաջին անգամն էր, որ խորհրդային զինվորն իր գործելակերպով համեմատության մեջ էր դրվում խորհրդային ժողովրդին ամենածանր մարդկային կորուստներ և ավերածություններ պատճա-

ռած գերմանական ֆաշիստի հետ: Սա արդեն ապտակ էր խորհրդային գաղափարախոսությանը, խորհրդային կարգերին ընդհանրապես և նշան այն բանի, որ Ղարաբաղյան շարժումը նաև հակախորհրդային ուղղվածություն ձեռք բերելու որակական փոփոխությունների եզրին է: 1988 թ. նոյեմբերի 7-ին հանդիպեցին վերոնշյալ պլակատի (բառային մակարդակով) կարծես ուղղակի շարունակությունը հանդիսացող ցուցապաստառներ՝ «Մոսկվան հովանավորում է ադրբեջանցի-թուրք ոճրագործներին», «*Кто стоит за палачами сумгаита???*», «*За спиной сумгаитских палачей стоит Москва*», «Սումգայիթի ակունքները փնտրել Մոսկվայում» և այլն: Ինչպես տեսնում ենք, սումգայիթյան ոճրագործության իրականացման և կազմակերպման մեղավորների մասին ժողովրդական մեկնաբանության մեջ ամեն ինչ ասվում էր անթաքույց, ինչը հետևանք էր ոչ միայն կենտրոնի կողմից որդեգրված նույն ձևով ընկալվող ադրբեջանամետ քաղաքականության, այլ նաև հայոց ինքնության մեջ որակական հսկայական թռիչքի: Հայերն այլևս լոկ ճշմարտություն և արդարություն հայցող ցուցարարներ չէին, նրանք արդեն իրենք էին մատնանշում իրենց նկատմամբ իրականացվող ցեղասպանության կազմակերպման իրական մեղավորներին՝ երկրի բարձրագույն իշխանություններին:

Խորհրդային իշխանության տարիներին ԽՍՀՄ օրենսդիր և գործադիր ղեկավարության գործունեությունն ուղղորդող մարմինը փաստորեն ԽՄԿԿ ԿԿ-ն էր և դրա ղեկավարությունը՝ Քաղբյուրոն: Ղարաբաղյան շարժման տարիներին հենց այս մարմինն էր բանակի և գերագույն դատարանի հետ կազմում կենտրոն հասկացությունը: Եվ պատահական չէ, որ կենտրոնին ուղղված ցուցապաստառներից շատերն իրենց մեջ պարունակում էին գնահատական նաև ԽՄԿԿ բարձրագույն ղեկավար մարմնին և հենց ղեկավար անձանց («*Сумгаит — ум, честь и совесть ЦК КПСС*», «Սումգաիթը ԽՄԿԿ-ի խիղճն ու պատիվն է. 1915 – 1500000 – Թալեաթ, 1988 - ? - Ալիև, 1990 - ? – Մ. Գ. *[Միխայիլ Գորբաչով]*»):

Չորրորդ բաժինը վերաբերում է սումգայիթյան հանցագործությունների մասնակիցների նկատմամբ տարվող դատավարության գնահատականին. «Սումգայիթյան խեղկատակավարություն»: Այս առթիվ ստեղծված ցուցապաստառների մի մասը, ասես, արտահայտելով մարդկանց առաջին ռեակցիան կատարվող անարդարության դեմ, պարզապես ամոթանք էին տալիս դատավարությանը («Ամոթ, *Позор, Shame прокуратура Аз. ССР*»), նաև կոչ էր արվում ոճրագործների նկատմամբ իրականացնել արդարացի դատ՝ «*Требуем справедливого суда сумгаитских событий*», ինչպես նաև արդարադատության ազատ գործունեության հնարավորություն ստեղծել՝ «*Свобода правосудию*», արվում էր նաև տրամաբանորեն հաջորդող եզրակացությունը՝ «Սումգայիթի դատավարությունը հանձնել միջազգային դատարան», «*Хатынь Nürnberg 1946 - Сумгаит Москва ?*»:

Հինգերորդ ենթախմբում արտացոլված է անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացը. «Մենք պետք է կռվենք, և ոչ լաց լինենք...»: Այս շարքի ցուցապաստառների թռուցիկ դիտարկումն անգամ ցույց է տալիս, թե ինչպես տարեցտարի փոխվում է ցուցապաստառային տեքստե-

րի բնույթը՝ խնդրողական երանգներ ունեցող, արդարություն, ցեղասպանության ճանաչում, արդարացի դատ պահանջող տեքստերն իրենց տեղը զիջում են վերջնական եզրակացության բնույթ ունեցող՝ պայքարի ու զենքի դիմելու անհրաժեշտությունը մատնացույց անող, անկախության վերականգման կոչող, ցեղասպանության պատճառների և պատասխանատուների մասին պատկերացումների փոփոխություն արձանագրող տեքստերին («... Հոն, ուր զենքն է խոսողը, ուր սուրերը կշողշողան, հոն ինչ գործ ունին խնդիրք և աղերսաթուղթեր»: Երիմեան Հայրիկ», «Մենք պետք է կռվենք և ոչ լաց լինենք / Ազգի կորուստը զենքով ետ խլենք», «Հայ նահատակների ոգին կոչում է պայքարի», «Հարատևում է պայքարող ժողովուրդը», «Սուգը հավերժ է, երբ պայքար չկա»):

Վեցերորդ ենթախումբը նվիրված է «ցեղասպանություն» հասկացության սահմանների ընդլայնմանը. «Տեր-Զոր... Սումգայիթ... Ատոմակայան... Նաիրիտ»: *Ղարաբաղյան շարժման տարիներին, սումգայիթյան կոտորածներից հետո, հայ ժողովրդի գոյությանը սպառնացող կամ որպես այդպիսին ընկալվող սոցիալական կամ քաղաքական ցանկացած երևույթ գնահատվում էր ցեղասպանության լույսի ներքո: Այսպես, Ղարաբաղյան շարժման տարիներին «ցեղասպանություն» հասկացությունը՝ ժողովրդական ընկալմամբ, իր մեջ ներառեց «սպիտակ եղեռն» (Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի հայաթափման օրինակով), «կենսաբանական, քիմիական եղեռն» (հայկական ատոմակայանի՝* «Տեր-Զոր - Ալթայ - Ատոմակայան - Սումգայիթ», *քիմիական հսկա «Նաիրիտ»-ի օրինակով՝* «Կորչի «Նաիրիտ» եղեռնը»), *«մշակութային, հոգևոր եղեռն» (հայոց լեզվի դերի նվազման՝* «Լեզուն դավելը սպիտակ եղեռն է», *Հայաստանի սահմաններից դուրս հայկական հուշարձանների ոչնչացման օրինակով՝* «Պատմական հուշարձանների ավերումը - հոգևոր եղեռն է») *հասկացությունները, քաղաքական որոշ ուժերի կողմից խորհրդային կարգերը նույնպես դիտարկվում էին ցեղասպանության լույսի ներքո՝* «Ցեղասպանությունը շարունակվում է խորհրդային գերության մեջ», «Կայսրության կազմում մնալը ինքնին ցեղասպանություն է»:

Յոթերորդ ենթախմբում ընդգրկված են ապագայում հնարավոր ցեղասպանություններից խուսափելու ժողովրդական պատկերացումները. «Ցեղասպանությունից փրկվելու միակ ելքը...»: *Ժողովրդական մեկնաբանմամբ հնարավոր ցեղասպանությունից խուսափելու մի քանի ճանապարհներ կային՝ սկսած Լեռնային Ղարաբաղին վերաբերող որոշումներից, վերջացրած քաղաքական ընգհանուր կողմնորոշման փոփոխմամբ: Դրանցից էին. ա)* «Հարգելով ղարաբաղցիների ինքնորոշման անկապտելի իրավունքը՝ կկանխենք նոր եղեռնը՝ *կարմիր և սպիտակ», բ)* «*Нежелание признать геноцид 1915 г. привело к геноциду 1988 г.*», *գ)* «*Безнаказанность организованных погромов рождает новые погромы*», *դ)* «Իր պատմությունը մոռացած ժողովուրդը դատապարտված է այն կրկնելու...» Գ. Նժդեհ», *ե)* «Ով հայ ժողովուրդ քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», *զ)* «Ցեղասպանությունից փրկվելու միակ ելքը անկախությունն է», «Ցեղասպանության կանխման երաշխիքը անկախությունն է» *և այլն:*

Այսպիսով, Ղարաբաղյան շարժման տարաբնույթ աղբյուրների ու, մասնավորապես, ցուցապաստառների քննությունը ցույց է տալիս, որ հայերի ցեղասպանության թեման, որպես հետևանք XX դ. սկզբի Մեծ եղեռնի և XX դ. վերջում հայերի նոր կոտորածների ու ջարդերի, Շարժման տարիներին շարունակում էր մնալ հայոց պատմական հիշողության կարևորագույն դրսևորումը: Նյութի դիտարկումը միաժամանակ այն համոզմունքն առաջացրեց, որ այդ հիշողությունը ձևափոխման գործընթաց է ապրում. XX դ. վերջի ճգնաժամից դուրս գալու փորձը զուգակցվում է XX դ. սկզբի ճգնաժամի հաղթահարման համար մղվող պայքարով, որի դրսևորումներից մեկն էլ այն է լինում, որ արդարություն և կարեկցանք հայցող զոհի խորհրդանիշն աստիճանաբար իր տեղը զիջում է մարտիկի կերպարին, որը գիտակցել է, որ ազգային նպատակների իրագործմանը կարելի է հասնել միայն պայքարի ճանապարհով:

Պատկերագրական նյութի քննությունը հնարավորություն է տալիս նաև տեսնել, թե ինչպես ցեղասպանության ճանաչմանը, այն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտմանը, հնարավոր մեղավորների մատնանշմանը, նրանց նկատմամբ տարվող դատավարությանը գնահատական տալուն ուղղված պայքարը մարդկանց մղում էր ակտիվ գործողությունների, բերում ժողովրդական զանգվածների քաղաքական հասունության աճի, դարերի և տասնամյակների ընթացքում ձևավորված կարծրատիպերի փոփոխման, անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացին, իսկ ապագա ցեղասպանություններից խուսափելու նպատակով գիտակցվում էր հասարակության մեջ քաղաքական արմատական վերափոխումների անհրաժեշտությունը, ինչը, ի վերջո, ավարտվեց նման ակնկալիքով ստեղծված նոր խորհրդարանի ձևավորմամբ:

Ղարաբաղյան շարժման ղեկին կանգնած և հեղափոխական գործելակերպ որդեգրած ազգային գործիչները փորձեցին այդ նույն աշխատանքը կիրառել նաև երկրի կառավարման ասպարեզում: Որոշ, հատկապես տնտեսական բնագավառներում նշված մոտեցումը գործեց, սակայն բնութագրական է, որ այն սկզբից ևեթ սայթաքեց քաղաքական, ուղենշային կարևորագույն փաստաթղթում՝ Անկախության հռչակագրում ցեղասպանության հարցի նկատմամբ նոր, պրագմատիկ մոտեցում ցուցաբերելու խնդրում: Բանն այն է, որ ելնելով արտաքին քաղաքականության բնագավառի ինչ-ինչ կնճռոտ հարցեր լուծելու անհրաժեշտությունից, նոր ղեկավարությունը փորձեց մի կողմ դնել ցեղասպանության հարցը: Նրանք պարզապես չէին գիտակցում (՞), որ հայերի պատմական հիշողության այդ հիմնարար տարրն ավելի է ամրապնդել իր գիրքերը և նոր զարգացումներ է ունեցել ու անգամ թվական գերակշռությունը խորհրդարանում բավարար չէ այն մեկ, թեկուզև «հեղափոխական» հարվածով, առաջին պլանից հեռացնելու համար: Իշխանությունները սկսեցին գործել անուղղակիորեն՝ հրապարակ նետվեց «երրորդ ուժի բացառման» խիստ հրապուրիչ գաղափարը, սակայն այն ևս համապատասխան ընդունելության չարժանացավ ժողովրդի լայն զանգվածների կողմից: Բարեփոխումների չափավոր կուրս ընտրած նոր իշխանությունները, թերևս, գիտակցեցին պատմական հիշողության գործոնի կարևորությունը (գուցե գործեցին նաև քաղաքական

այլ բնույթի հաշվարկները) և ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը դարձրեցին արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը: Այսինքն ցեղասպանության ճանաչման և այն իրականացնողների դատապարտման համար պայքարի ճանապարհով նպատակին հասնելու մոտեցումը ձեռք բերեց պետական երանգ, ուստի և, առաջին հայացքից, թուլացան ցեղասպանության հիշողության ժողովրդական դրսևորումները: Սակայն որ դա այդպես չէ, ակներև դարձավ Գուրգեն Մարդարյանի եղերական սպանությանը հաջորդած ժողովրդական զանգվածային ելույթների ժամանակ:

ПАМЯТЬ О ГЕНОЦИДЕ КАК ФАКТОР ФОРМИРОВАНИЯ НОВОЙ ИДЕНТИЧНОСТИ
(Конец 1980-х — начало 1990-х годов)

АРУТЮН МАРУТЯН

Резюме

В конце 1980-х — начале 1990-х гг. в жизни армянского общества имели место события общенациональной значимости — Карабахское движение. Анализ транспарантов и плакатов Карабахского движения показывает, что тема Геноцида армян, из-за Геноцида начала XX в. и новых погромов и резни конца XX в., в годы Движения продолжала оставаться важнейшим проявлением исторической памяти армян. Историческая память — один из основных элементов, характеризующих понятия "нация", "национальная идентичность". Она основана на знаниях и отношениях людей к реальному или к наличествующему лишь в представлениях историческому прошлому в целом или отдельных его элементов. В то же время, национальная идентичность, так же как и историческая память не статичные явления, а подвержены трансформациям, которые могут быть результатом как внутренних развитий, так и внешних воздействий. В рассматриваемый период проявилось комбинирование вышеназванных факторов, что и привело к формированию важных элементов новой идентичности. Историческая память народа находилась в процессе видоизменения: попытка выхода из кризиса конца XX в. сочеталась с борьбой за преодоление кризиса начала XX в., одним из проявлений чего является то, что символ жертвы, просящей справедливости и сочувствия, постепенно уступает место образу борца, осознающего, что осуществления национальных целей можно достичь лишь путем борьбы. Анализ материала позволяет также увидеть, как борьба, направленная на признание Геноцида и осуждение его исполнителей и организаторов, на выявление возможных виновников, оценку суда над ними — толкали людей к активным действиям, приводили к росту политической зрелости народных масс, к изменению стереотипов, сформированных веками и десятилетиями, к процессу переоценки прошлого и настоящего, а с целью избежания новых геноцидов — осознавалась необходимость коренных политических изменений в обществе. Со второй половины 1990-х годов такой подход — достижения цели признания геноцида и осуждения ее организаторов и исполнителей путем

борьбы – принял государственный оттенок, и поэтому, на первый взгляд, народные проявления памяти о Геноциде несколько ослабли. Однако то, что это не так, стало наглядным во время массовых народных выступлений, последовавших за злодейским убийством в Будапеште офицера Гургена Маргаряна зимой 2004 г.

THE MEMORY OF GENOCIDE AS A MOULDER OF NEW IDENTITY
(End of the 1980s – beginning of the 1990s)

HARUTYUN MARUTYAN

S u m m a r y

At the end of the 1980s – at the beginning of the 1990s events of all-national significance (Karabagh Movement) have been taking place in the Armenian society. The study of transparencies and posters of the Karabagh Movement reveals that the topic of Armenian Genocide remained the principal expression of Armenians' historical memory due to the Genocide of the beginning of the 20th century and the new massacres of the Armenians towards the end of the 20th century. Historical memory is one of the main features characterizing the "nation" and "national identity" phenomena. It is based on popular knowledge (realistic or imagined), perceptions and attitude towards the key events of their national history. At the same time national identity, as well as historical memory are not static phenomena, they are subjects for transformations as a result of both internal developments and external influences. In the period examined in the paper the combination of the aforementioned factors brought to formation of fundamental elements of a new identity. Historical memory of the people was undergoing a process of change: the attempts to overcome the crisis of the end of the 20th century were being associated with the struggle directed towards overcoming the crisis of the beginning of the 20th century. This gradually led to replacement of the image of a victim pleading for mercy and justice with that of a warrior who had realized that national objectives could be achieved through struggle only. The study of the theme allows observing a growth of political awareness of wide masses of the people along their course of struggle for the acknowledgement of Genocide, revelation of its initiators and perpetrators, and political assessment of their trials. Seemingly unbreakable stereotypes that had formed in the course of decades and even centuries started to change. The past and the present were evaluated; a need for radical political changes within the society was realized in order to prevent genocides in the future. The people understood that in order to solve the aforementioned problems, a change in the political structure of the state is required. Thus in the years of the Karabagh Movement the theme of genocide, transgressing the limits of pain and sorrow typical for its initial stage, drove people to activity that resulted in the formation of a new parliament, which was expected to choose the course of radical changes. Since the second half of the 1990s, this approach – to achieve the acknowledgement of Genocide and revelation of its initiators and perpetrators through struggle – received a state shade that is why, from the first glance, the popular manifestations of the genocide memory have weakened. In the winter of 2004, the villainous murder of Gurgen Margaryan in Budapest by an Azerbaijani military officer was followed by mass demonstrations in Yerevan. This manifests that the memory of genocide is still the main manifestation of Armenian historical memory.